

## ՀՐԱՎԱՐԻ ՀԱԿՈԲՅԱՆ

### ԱՐՑԱԽ-ՌԻՏԻՔԻ ՄԱՆՐԱՄԿԱՐՉԱԿԱՆ ԴՊՐՈՅԻ ՄԻ ԽՈԽՄԲԻ ԶԵԽԱԳՐԵՐ

Դեռևս 60-ական թվականների սկզբներին, Վասպուրականի ձեռագրերի հետ ժանոթանալիս, մեր ուշադրությունը գրավեց միառ մանրանկարներ ունեցող երեք ձեռագիր ավետարան (Մատ. № 316, 6303 և 4820): Դրանցից և ոչ մեկում հիշատակարան չի պահպանվել. ընդօրինակման ժամանակի և վայրի մասին ևս որոշակի տեղեկություններ չկան: Մատենադարանի համապատասխան քարտերում և «Յուցակ ձեռագրաց»-ում ժամանակը նշված է XIII—XIV դդ.: Մնում էր պարզել ընդօրինակման տեղի հարցը: Մանրանկարների ոճական ընդհանուր առանձնահատկություններից (նկարների՝ սկզբի թերթերում հավաքված լինելը, մաքուր խորքի պահպանում, դեկորատիվ գրաֆիկ ձեեր, գծի դերի շեշտում, ոճավորման հակում...) ելնելով, ենթադրեցինք, որ ոյդ ձեռագրերն ամենայն հավանականությամբ Վասպուրականի մանրանկարչության դպրոցի արգասիք են: Հետագայում դրանք այդպես էլ մտան դիտական շրջանառության մեջ<sup>1</sup>:

Վերջին տարիներին «Վասպուրականի մանրանկարչությունը» ալբոմը կազմելու ժամանակ հարկ զգացվեց ավելի մոտիկից զբաղվել հիշյալ ձեռագրերով: Արդյունքը մեզ համար անսպասելի եղավ. ի հայտ եկան որոշ պարագաներ, որոնք տարակուսելու առիթ տվեցին դրանց Վասպուրականի պատկանելիության վերաբերյալ:

Ընդհանուր քննության և որոշ ճշգրտումների նպատակով որոշեցինք մեկ անգամ ևս աշքի անցկացնել Մատենադարանում պահպանվող XIII—XIV դդ. նկարագարդ մատյանները: Հայտնաբերվեցին մի քանի ուշագրավ ձեռագրեր, որոնցից հատկապես երկուսը (№ 4023 և 6319) անմիջականորեն ու սերտորեն կապվում են վերոհիշյալ երեք ձեռագրերի հետ: Դրանք, անտարակույս, նույն արհեստանոցի կամ կենտրոնի աշխատանք են: Այսպիսով, մեզ հետաքրքրող

<sup>1</sup> Լ. Դ. Զահարյան, Օ երեք հայոց մանրանկարչությունների առաջնային առանձնահատկությունները Վասպուրականում, «ՀՀ պատմություն» 1971, № Դ էջ 52—55: Հրատարակության մեջ մանրանկարչությունները Վասպուրականում, «ՀՀ պատմություն» 1971, համար 1, էջ 82—86: S. Der-Nersesian, Lart Armenian, Paris, 1977, թ. 188, pl. 174: B. Brentjes, Drei Jahrtausende Armenien Leipzig, 1973, նկ. 76 Minaturen aus einem Evangeliar von Waspurakan (Խոսքը Մատենադարանի № 316 ձեռագրին է վերաբերում): Խոկ 1980-ին հրատարակվեց Արքայի պատմությունից գիրքը, որտեղ հիշյալ ձեռագրերը դիտվում են որպես երգանի շրջանից դուրս եկած (էջ 36—65):

<sup>2</sup> Հենց այց նկատառում էլ մենք հիշյալ ձեռագրերից և ոչ մի մանրանկար շմուծեցինք «Հայկական Մանրանկարչություն, Վասպուրական» ալբոմ (Երևան, 1978):

ձեռագրերի թիվը հասավ հինգի<sup>3</sup>: Զարմանալիորեն, սակայն, այդ երկու ձեռագրերում ևս, ինչպես նախորդ երեքում, բացակայում են տեղեկություններ ընդօրինակման ժամանակի ու վայրի մասին: Ուստի հիշյալ հինգ ձեռագրերի տեղի հարցը որոշելու համար մնում էր դիմել միակ հնարավոր միջոցին՝ մանրանկարների ոճապատկերագրական առանձնահատկությունների և հետագա հիշյատակագրական փաստերի մանրազննին քննությանը:

Սույն հոդվածը հիմնականում վերաբերում է հետագա հիշյատակագրական փաստերին: Սակայն հարկ ենք համարում մի քանի խոսքով ներկայացնել մանրանկարների նաև պատկերագրական-ոճական դեերը: Փաստորեն, վերջիններիս առիթով տարակուսանք ծաղեց դրանց Վասպուրականի պատկանելության վերաբերյալ:

Ներկայացվող խմբի ձեռագրերում առաջին հերթին ի հայտ է գալիս նկարների թեմատիկ ցանկի յուրակերպ ընտրությունը: Այն չի նմանվում հայկական մանրանկարչության մյուս դպրոցներում ընդունված պատկերացին շարքին: Զանազանություններն որոշակի են նաև Վասպուրականի հետ համեմատելիս: Օրինակ, Վասպուրականում գրեթե պարտադիր դարձած «Հիսուսը փառքի աթոռին», հինկառակարանային «Արքահամի զոհարերության», «Այլակերպության», հրաշագործությունների ընդարձակ շարի՝ «Հարսանիքը Կանայում», «Հիվանդների բուժումը», «Այրու մահամերձ որդու փրկությունը», «Պետրոսի թերահավատությունը ծովում», ապա՝ «Նկանակի բաշխման», «Պատարագի մատուցման», «Հաղորդության», «Աստվածամոր վերափոխման» ու մի քանի միջանկյալ թեմաներ այսուղի բացակայում են: Բոլորովին շեն հանդիպում Վասպուրականի մանրանկարչության համար այնքան ընութագրական աշխարհիկ-կենցաղային մոտիվները. նաև՝ գրիշների, ծաղկողների ու պատմիրատումների խիստ հետաքրքրական դիմանկարները:

Մինչդեռ այդ հինգ ձեռագրերում տեսնում ենք Վասպուրականի XIV—XV դդ. արվեստին ոչ հատկանշական Հիսուսի մանկության, առակների ու մեղսագործության ցիկլը<sup>4</sup>: Պատկերվում են «Փախուստը դեպի Եգիպտոս», «Մանուկ Հիսուսի բարողը տաճարում», «Իմաստուն և հիմար կույսերը», «Մեղսագործությունը» (Աղամն ու Եվան իմաստության ծառի տակ), «Խորհրդավոր ընթրիքը» և այլն<sup>5</sup> (ստորև համեմատական ցանկը տե՛ս էջ 137):

Նույնիսկ պարտադիր համարվող կանոնական թեմաներում, ինչպիսին «Ավետումն» է, «Ծնունդը», «Տյառնընդառաջը», «Ղազարոսի հարությունը», «Շանալվան» այդ ձեռագրերում շկան Վասպուրականին բնորոշ պատկերագրական ձևեր: Հիշյալ ձեռագրերի և Վասպուրականի մանրանկարներում դրսեռվող ավետարանական պատկերաշարի հիմնական-ծրագրային այդպիսի զանազանությունները, կարծում ենք, տարբեր միջավայրերի, ծիսագաղափարական տարբեր նախասիրությունների ու սովորութների հետեանք են: Մեղ շեն համո-

3 Լ. Զարարյանի գրքում հիշյալ խոմբը («Լիցեալ րукописи из района Хизана») ներկայացված է վերը նշված երեք ձեռագրերի:

4 Վասպուրականում շեշտվում են «Ճնունդ-Հայտնություն-Հրաշագործություններ» և գրանց հետ առնչված Փրկության գաղափարները:

5 «Մանուկ Հիսուսի բարողը տաճարում» թեման այսուղի միավորված է Հերեղեայի որդիների մոր պատմության հետ: «Խորհրդավոր ընթրիքը» թեման Վասպուրականի ԽIII—ԽVI դդ. արվեստում հանդիպում է միայն Հովսիան Բերկրեցու մոտ (ձեռ. Մատ. № 4806, 4818): Հնդ որում, արդ տեղ օգտագործված սիհման ոչ մի կապ չունի № 316 ձեռագրի պատկերի հետ:

## ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՑԱՆԿ

Վասպուրականի և առանձին խումբ կազմող հինգ ձեռագրերի թեմատիկ պատկերների (XIV—XV դդ.)

Բնդգծումները ցույց են տալիս պատկերագրական սկզբունքային տարրերությունները

Հե	Տերունական թեմաներ	Վասպուրական	Հինգ ձեռագրեր	Ծանոթագրություններ
1	Հիսուսը փառքի աթոռին	կա	շիք	
2	Արքանամի զոհարերությունը	կա	շիք	
3	Ավետում	կա	կա	
4	Ծնունդ	կա	կա	
5	Մոգերի երկրպագումը	կա	շիք	
6	Տյառնընդառաջ	կա	կա	
7	Կոտորումն մանկանց	կա	կա	
8	Փախուստ դեպի Եղիպտոս	շիք	կա	
9	Մանուկ հիսուսի քաբողը տաճառում	շիք	կա	
10	Մկրտություն	կա	կա	
11	Մուտք Երուսաղեմ	կա	կա	
12	Այլակերպություն	կա	շիք	
13	Ղաղարոսի հարությունը	կա	կա	
14	Հարսանիքը կանայում	կա	շիք	
15	Նկանակի բաշխումը	կա	շիք	
16	Պետրոսի թերահավատությունը	կա	շիք	
17	Հիմանդների և կույրի բուժումը	կա	շիք	
18	Բժամատուն և հիմար կույսեր	շիք	կա	
19	Մեղսագործություն	շիք	կա	
20	Պատարագի մատուցումը	կա	շիք	
21	Հաղորդություն	կա	շիք	
22	Ոտնլվա	կա	կա	
23	Խորհրդագոր ընթրիք	շիք	կա	բացառությամբ Հովսիան թերկրացու երկու աշխատանքի
24	Մտանություն	կա	կա	
25	Պիգատոսի զատաստանը	կա	կա	
26	Խաշելություն	կա	կա	
27	Դժողովի ավերումը	կա	կա	
28	Թաղումն Հիսուսի	կա	կա	
29	Հարություն	կա	կա	
30	Համբարձում	կա	կա	
31	Հոգեգալուստ	կա	կա	
32	Վերափոխումն Աստվածամոր	կա	շիք	
33	Ավետարանիչներ	կա	կա	
34	Անդանաթերթեր	կա	կա	
35	Մտացողների, զրիշների և նկարիչների պատկերներ <sup>6</sup>	կա	շիք	

Պում այդ ձեռագրերը Վասպուրականին վերագրելու է. Զաքարյանի բերած պատկերագրական բնույթի փաստարկները: Այսպես, Աղամի ու Եվայի մեղագործության հինկտակարանային թեման, որը տեղ է գտնել հիշյալ ձեռագրերում, նա ընդհանրապես բնորոշ է համարում Վասպուրականին<sup>7</sup>: Սակայն պետք

6 Համարված 35 թեմաներից միայն վեցում կան ընդհանրություններ:

7 Ի միջիալոց, լ. Զաքարյանի զրիքի 44—52 էջերում կատարված մանրանկարների պատկերագրության քննությունը շահեկանորեն տարբերվում է 37—39 էջերում բերված օրինակներից ու Եղիպակացությունից: Այդտեղ ձեռագրերը Վասպուրականին վերագրելու տրամադրվածությունը կարծես խանկարել է հեղինակին անկողմնակալ մնալու որոշ փաստերի նկատմամբ:

է ասել, որ Վասպուրականի XIII—XV դդ. մանրանկարներում մեղսագործության թեման գրեթե բացակայում է: Դա պատկերվում է XVI և XVII դարերում: Մինչդեռ նույն ժամանակամիջոցին «մեղսագործությունը» շատ կանոնավոր կերպով իր գոյությունը պահպանում է Սյունիքի և Կիլիկյան մանրանկարիչների մոտ<sup>8</sup>: Ավելին, հինկտակարանային այդ թեման փորագրված է պատմական Սրցախ նահանգի Գանձասարի եկեղեցու (1216—1238 թթ.) արևմտյան ճակատի կենտրոնական մասում:

Լ. Զաքարյանը վասպուրականամետ եղբակացության է հանգել նաև «Ծննդում» մոգաց թագավորների ծնկաշոք դիրքի կապակցությամբ. «... ևս մեկ, Վասպուրականի համար բնորոշ պատկերագրական մանրամասն, — գրում է նա, — № 4820 ձեռագրի «Ծննդում» նվերները ձեռքներին ծնկաշոք մոգերի գուգորդությունը դունում ենք միայն Մոկսում XV դ. լոնզորինակված Մատ. № 4922 ձեռագրում»<sup>9</sup>: Պետք է արդյոք նման գուգորդության համար շուրջ երկու դարի տարածություն կտրել, երբ հեղինակը կարող էր ավելի հարմար օրինակներ բերել, այն էլ մոտ ժամանակամիջոցում՝ առաջին հերթին Կիլիկիայում<sup>10</sup>, ապա Սյունիքում<sup>11</sup> և նոր միայն Վասպուրականում<sup>12</sup>: Ի դեպ, քրիստոնեական պատկերագրության խոշրագույն դիտակ Գ. Շիլլերը ծնկաշոք մոգերի տարրերակը համարում է արևմտյան երեսությը. որը մուտք է դորձել պատկերագրության մեջ IX դ.: Նա նշում է, որ արևելյում մեծությունների կամ սրբությունների առջև խոնարհվել են, իսկ արևմտյան սովորույթը ծնկի գալն էր պալատներում<sup>13</sup>: Այն էլ ասենք (և դա կարևոր է), որ № 316 ձեռագրում մոգաց թագավորներն ընդհանրապես բացակայում են, իսկ № 6303 ձեռագրում՝ կանգնած են: Ուրեմն, մոգերի ծնկաշոք դիրքը ձեռագրերի այս խմբում պատկերական մեկ ամբողջական սկզբունք չի ներկայացնում (երեք ձեռագրի, երեք տարրերակ):

Հակառակը կարող ենք պնդել մեկ այլ «վասպուրականամետ» թեմայի՝ «Խորհրդավոր ընթրիքի» կապակցությամբ ևս: Այդ թեման, ինչպես քիչ առաջ նշեցինք, բացառությամբ Հովսիան Բերկրեցու ձեռագրերի, տեղ չի դուել Վասպուրականի XIII—XV դդ. վարպետների աշխատանքներում: Վասպուրականում սովորաբար «Խորհրդավոր ընթրիքին» փոխարինում է «Ռուսական»<sup>14</sup>: Ինչ վե-

<sup>8</sup>ՏԵ՛ս Թ. Տարոնացու նկարագրում 1318 թ. Աստվածաշունչը (Մատ. № 206), այսուհետեւ Սարդիս Պիծակի 1338 թ. նկարագրում Աստվածաշունչը (Մատ. № 2627) և այլն:

<sup>9</sup>Լ. Զաքարյան, նշվ. աշխ., էջ 38:

<sup>10</sup>ՏԵ՛ս Երուսաղեմի № 2563 (1262 թ.), 2568 (12668 թ.) և. իշարկե, Սարգիս Պիծակի պատկերագրած ձեռագրերը՝ Մատ. № 5786, թ. 17ա, Երուսաղեմի № 1972 և այլն:

<sup>11</sup>Անգամ Եսայի Նշեցու Աստվածաշնչում «Ծննդյան» ժամանակ մոգերից ավագը ծնկաշոք է:

<sup>12</sup>Օրբելյաները շատ են նաև այստեղ. առաջիններից մեկը Զաքարիա Աղթամարցու 1357 թ. ձեռագրում է (Մատ. № 5332), որն, ի դեպ, Սարգիս Պիծակի Մատ. № 5786 ձեռագրից կատարված ընդորինակություն է:

<sup>13</sup>Gerritryd Schiller, Iconography of Christian Art, v. I, London p. 111 (որպես բացառություն միայն Մոնցի յուղաշերն են): Հանուն ճշմարտության պետք է ասել, որ Գ. Միլլեն միանգամայն այլ կարծիք է հայտնում այս առթիվ (Recherchissur L'Iconographie de l'évangile aux XIV-e, XV-e et XVI-e siècles, Paris, 1916, p. 150), որը և մեջքերգած է Լ. Զաքարյանի դրառում:

<sup>14</sup>ՏԵ՛ս Հ. Հակոբյան, Ավելարանական պատկերագրության առանձնահատկությունները Վասպուրականում, «Էջմիածին», 1971, Դ, էջ 54—55: Նույնիսկ Աղթամարի եկեղեցու որմնանկարներում տեղական կրոնածխական սովորույթներից ենելով «Խորհրդավոր ընթրիքը» փո-



Նկ. 1

բարերում է № 316 և № 6319 ձեռագրերի խնդատիալ պատկերներին, ասկա դրանց մոտավոր աշխարհը ճիշտ կլիներ փնտիքի Սյունիքում, մասնավորապես Բորսու Յարնացու վրձնած «Եսայի նշեցու Աստվածաշնչում» (Մատ. № 206, 1318 թ.)<sup>15</sup>:

Խարինվել է Բեթանիայում «Հիսուսի օժման» տեսարանով. իսկ վերջինս իր հերթին ներառել է առարյալների սուրբի լվացման պահը (տե՛ս S. Der-Nersessian, Aghtamar Church of the Holy cross, Cambridge, 1965, p. 108):

<sup>15</sup>Տե՛ս նաև Ա. Ավետիսյան, Հայկական մանրանկարչության Գլանորի զպրոցը, Երևան, 1971, էջ 114—115:

Հիշյալ հինգ ձեռագրերում Վասպուրականի XIII—XV դդ. մանրանկարչության համեմատությամբ օգտագործված են պատկերագրական ուրույն սխաններ. նկ. 1՝ «Ավետում» (ձեռ. № 316), 2. «Ծնունդ» (ձեռ. № 316), 3. «Տյառնընդառաջ» (ձեռ. № 4820), 4. «Մանուկ Հիսուսի քարոզք տաճարում» (ձեռ. № 6319), 5. «Փախուստ դեպի Եգիպտոս» (ձեռ. № 6319) և այլն:

Դժվար է գտնել XIII—XV դդ. հայկական ձեռագրերի մի այլ խումբ, որի մանրանկարներն այդքան ինքնատիպ լինեն և իրենց թեմատիկ շարուգ, և թե՛ սլատկերագրությամբ: Ճիշտ է, Վասպուրականի XIII—XVI դդ. մանրանկարչությունը, ընդհանրությամբ հանդերձ, իր ներսում տրոհվել է առանձին կենտրոնների ու ճյուղավորումների, սակայն դրանցում զանազանությունները շեն հասել սկզբունքային աստիճանի<sup>16</sup>:

Բավական ինքնատիպ են այդ մանրանկարների ոճական առանձնատկությունները: Դրանք մասամբ հիշեցնում են Վասպուրականի մանրանկարների տիպապատկերային ձևերը, բայց մանրագնին մոտեցման գեպքում դրսեվորում են որոշակի զանազանություններ: Վասպուրականի ձեռագրերում թեթև ուրագգծված կամ առանց շրջանակների մանրանկարները ֆրիզային եղանակով ծավալվում են սկզբի թերթերի վրա՝ մի ամբողջություն կազմելով իրենց բաց, հաջորդական-շարունակական բնույթով: Այն մի առանձին պատկեր ընդհանուր թեմայի անքակտելի մի դրվագն է: որտեղ մեկը բացահայտվում և պայմանվորվում է մյուսով: Այդ նպատակամիտումից ելնելով Վասպուրականի ծաղկողները ստեղծում են հորինվածքների իրենց հատուկ ձևեր՝ կերպարների արտակարգ աշխույժ արտահայտություններով ու շարժումներով<sup>17</sup>:

Այլ է պատկերը Հիշյալ հինգ ձեռագրերում: Այդտեղ ամեն մի մանրանկար կարծես ունի հորինվածքային ինքնակա բնույթ. դրանք մի տեսակ իրենց մեջ փակված են թվում (նկ. 6): Ֆիգուրների և զարդերի հարուստ համակարգը ամփոփված է լայն, հյուսաղարդ շրջանակների մեջ, որոնք կերպարների հետ միավորվում են ֆունկցիոնալ ամբողջականությամբ: «Փակ բնույթ» են կրում նաև ֆիգուրների շարժումները: Դրանք ասես կաշկանդված լինեն, դարձումները դանդաղ են ու ժանր: Անշտապ և ոչ միշտ սահում գծանկարում բացակայում են Վասպուրականի մանրանկարչության համար այնքան բնութագրական դինամիկան ու ոիթմը<sup>18</sup>: Միատիպ են պատկերվում դեմքերն ու առաջ պարզած

16 Մեղանում այն թյուր տպագրությունը կա, ըստ որի, փաքք-ինչ պարզունակ, հարթակատեկերային-գրաֆիկ ձևերով կատարված մանրանկարները (հիշատակարանի բացակայության պայմաններում) մեծ մասամբ վերագրում են Վասպուրականի դպրոցին: Նման մոտեցումը արհեստականորեն նեղացնում է հայկական մանրանկարչության բազմանյութ երեւույթի շրջանակները: Պետք է ասել, որ այդ ոճի աշխատանքները (և պարզունակ բացատրակարություններով) հանդիպում են մանրանկարչության նաև մյուս կենտրոններում ու դպրոցներում: օրինակ, Սյունիքում (Մատ., ձեռ. № 6292, 1293 թ., 2930, 1315 թ. և այլն), Նախիջենում (Մատ., ձեռ. № 3722, 1304 թ.), Բարձր Հայքում (Մատ., ձեռ. № 1379, 1334 թ.), Արցախում, Դեղաբարքունիքում և այլուր:

17 Մանրամասն տես «Վասպուրականի մանրանկարչությունը», Ա, Երևան, 1976, Բ, 1982. «Վասպուրական» ալբոմ, Երևան, 1978:

18 Վասպուրականում շատ հաճախ գիծը նպատակամիտված է լինում շարժման, երբեմն նույնիսկ ձևի արտահայտմանը:

ձեռքերը, որոնք ասես քարացած լինեն։ Ամբողջության մեջ այդ ֆիգուրները շրջանակարգերի հետ դեկորատիվ մանրատված հարթություններ են հիշեցնում (գորգի նմանվող), ինչպես ձևափոխումների (դեֆորմացիա) ու ոճավորումների, այնպես էլ դրանց հետ ներհյուսված զարդամոտիվների դաշն համաշափությամբ<sup>19</sup>։



Նկ. 2

Առավել ինքնատիպ է ու գրավիչ գունաշարը՝ այդ մանրանկարների ոճական համակարգի հիմքերից մեկը։ Վասպուրականի մանրանկարների հավասարապես մարուր և ուժեղ, երբեմն էլ ջրաներկային թափանցիկության շափ-

<sup>19</sup> Դրանք թերեւ այնքան ոճավորումներ չեն այդ հասկացության ընդհանուր իմաստով, որոնք ժողովրդական արվեստի, նրա ֆուկլորային, զարդադեկորատիվ յուրահատկություններն ըմբռնելու և վերարտադրելու յուրօրինակ ձգություն, որ պուցե և ներհայեցողաբար։

թեթև դրված գույների փոխարեն, այստեղ հիմնականում հագեցված, նույնիսկ փոքր-ինչ խուլ տոներ են: Դրանք շունեն սիմվոլի հասնող նյարդային հակադրությունների լարում կամ աշխուզժ անցումների ու պայծառ երանգների շահեկանությունը, որը կրկին Վասպուրականին է հատուկ: Այդ հինգ ձեռագրում կա նրբերանգ մի տոն, որն ասես մաքրում, լուսավորում է մարդու հոգին: Սպիտակի առատությունը խառնուրդներում և դրա նուրր սահուն ընթացքը եզրագծերին կից որոշիչ զեր են կատարում: Այն թուղաժնում է առանձին վերցրած գույների սրությունը և այդ նրբհնշեղության մեջ մեղմում ընդհանուր լարվածությունը: Նույնիսկ խիստ արտահայտված դրամատիկ պահերը (օրինակ «Խորհրդավոր ընթրիք», «Մատնություն») ձեռք են բերում մտերմիկ շեշտա-



դրումներ: Այդ մանրանկարները ասես պարուրված լինեն արծաթյա-վարդագույն երանգի թափանցիկ քողով, որի տակից վայելորեն շողում են զմրուխտյա թափ կանաչը, երկնագույնն ու նարնջամանիշակագույնը: Ամբողջությամբ վերցրած այդտեղ գունաշարն ունի ազնիվ մի փայլ, ուր ամեն ինչ թվում է հանգիստ ու բանաստեղծական:

Հիշյալ մանրանկարների ոճապատկերագրական առանձնահատկությունների քննությունն առանձին նյութ է լինելու մեջ համար<sup>20</sup>: Սակայն դրանց ընդօրինակման վայրի թեկուզ և մոտավոր կողմնորոշման համար, շահեկան է լինելու մի քանի խոսք ասել հայկական մանրանկարչության մեջ այդ ձեռագրերի հետ եղած տուավել սերտ զուգորդությունների մասին: Այդտեղ արդեն, առաջին հերթին ուշադրություն է գրավում Արցախ նահանգի Խորանաշատ վանքում 1224 թ. ընդօրինակված Ավետարանը (Մատ. № 4823, նկ. 7)<sup>21</sup>, XIII դ. վերագրվող Վախտանգ իշխանի նոր կտակարանի մասունքը (Մատ. ձեռ. № 155), Վախտանգ Տանդիկի և նրա կնոջ՝ Խորիշահի պատվերով ընդօրինակված Ավետարանը (Մատ. ձեռ. № 378, նկ. 8)<sup>22</sup>: Կարևորություն ենք տալիս Մատ. № 5569 ձեռագիր-Ավետարանին (XIII—XIV դդ.): Այդտեղ եվսերիոսի ողջույնի բնագրի, համտրաբրառների աղյուսակների (նկ. 9) և անվանաթերթերի պատկերման ինքնատիպ ձեերը՝ զարդարուն լայն շրջանակների մեջ, ու գունային բնորոշ շարը՝ սպիտակի խառնուրդով ստեղծված բաց կանաչը, կապույտն ու վարդագույնը, ցույց են տալիս վերը նշված հինգ ձեռագրերի հետ ունեցած ոճաձեաբանական սերտ կապը (համեմատել նկ. 10): Խորանների հարդարանքի նման կերպ Վասպուրականում բոլորովին շի հանդիպում:

Մասնակի վերապահություններով այստեղ կարելի է հիշատակել Մատ. № 4185 Ավետարանը (XIII դ.), Խաչննո երկրում 1326 թ. ընդօրինակված (Երևան, № 1794) Ավետարանը<sup>23</sup>, Հալիկում (ԳԴՀ) գտնվող 1224 թ. Ավետարանը<sup>24</sup> և այլն:

20 Մասնավորապես տեղին շի թվում, երբ Լ. Զաքարյանը (նշվ. աշխ.) հիշյալ ձեռագրերի դիմապատկերները համեմատելով Աղթամարի եկեղեցու արևելյան որթագալարակի XIII—XVI դդ. լրացում հանդիսացող հեծյալի պատկերի հետ, գրում է. «Երկու գեղքերում է շեշտված այտոսկերներով լայն գեմքերն ու երկարավուն աշբերը կատարված են մոնղոլական էթնիկական տիպի բաց գիտությամբ ու ազդեցությամբ» (էջ 41): Դուցք այդ խոսքերը համապատասխանում են նշված բանդակին (և դա նկատել են ուսումնասիրողները), բայց ոչ բալորովին հիշյալ ձեռագրերի կերպարներին, որտեղ դյուրին չէ նման ազդեցության գտնելը: Ասենք, որ մանդուլական կամ արարական էթնիկական գեմքը միայն Վասպուրականի արվեստում չեն դրսնորվում: Դա կարելի է տեսնել Հայաստանի մի շարք այլ վայրերում ևս. օրինակ, Երզնկայում ընդօրինակված 1449 թ. Ավետարանի նկարները (Հ. Քյուտայան, Փրիստոնի համալսարանի թիվ 18 հայ. ավետարանը, «Բազմավեպ», 1974, էջ 169—174): Թալինի շրջանի Արեգ գյուղում Ա. Մանուկյանի սեփականությունը հանդիսացող XIV—XV դ. Ավետարանը: Նույնիսկ Ավագի աշխատանքներից մի քանիսում կերպարները կրում են արևելյան էթնիկական գծի կնիքը:

21 Տիյալ դեպքում նկատի ունենք ֆիզուրների ոճական նույնածն մեկնաբանությունը (համեմատել № 316 ձեռագրի հետ). գունային նման շարը՝ սպիտակի խառնուրդով ստացված մանիշակագույնը, արծաթակապույտը, բաց, տաք կանաչը. նկարների լայն երիդաշրջանակները՝ ներսի զարդամուխիներով:

22 Այդ ձեռագրի ժամանակը սովորաբար նշվում է 1269 թ. առաջ: Բ. Ռուբերյանը հիմնավոր կերպով գտնում է, որ այն ընդօրինակվել է 1212 թվականին («Եսաշնի իշխանությունը X—XVI դարերում», Երևան, 1975, էջ 143—144):

23 Ն. Գ. Պաղարյան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, Զ, Երևանակեմ, 1972, էջ 140—144:

24 B. Brentjes, Das Armenische manuskript w 1, in Halle. "Armenische Handschriften"



նկ. 4

Ոճական աղերսների առիթ են տալիս Սյունիքում ընդօրինակված ձեռագրերը<sup>25</sup>, Այսպիս, քննարկվող հինգ ավետարաններում հանդիպող տղամարդ-

risen in der DDR, II. Berlin, 1973.

25 Նկատի ունենք նաև Թորոս Տարոնացու մանրանկարների տիպապատկերագրական մի քանի գծերը, մանավանդ ավետարանիչների դիմապատկերներն ու տնվանաթերթերը, Աստվածամոր մանկան հետ պատկերը՝ Դուկասի անվանաթերթում, մեղսագործության թեման, խորհրդավոր ընթրիքում բալորակ սեղանի ձեր և ալին (տե՛ս Սոայի Նշեցու 1318 թ. աստվածաշուշը, Մատ-

կանց տիպերը՝ ետ զնացող գանգամասերի ընդգծմամբ ու աշքերի սովորական բացվածքով (նկ. 11) հիշեցնում են Գլածողի ծաղկող Մատթեոսի (Մատ., ձեռ. № 6292), Մոմիկ Նկարչի (Մատ., ձեռ. № 6792 նկ. 12) և նույնիսկ Թորոս Տարոնացու պատկերած կերպարները։ Երբեմն, այդ ձեռագրերում լինում են պատկերագրական այնպիսի ինքնատիպ մանրամասներ, որոնց միակ զուգորդությունը կրկին Սյունիք-Արցախի շրջանում է հանդիպում։ Նկատի ունենանք թեկուզ հանդիսավոր լուր ազդարարելու ժամանակ փող հնչեցնելու հետաքրքրական մոտիվը՝ «Ավետում», «Հարություն» (ձեռ. № 316, 6319, 6303)։ Այդ ձեռագրերից բացի, դա հանդիպում է նաև Խաչենում ընդօրինակված 1237 թ. (Զիկագոյի Համալսարան<sup>26</sup>), Սյունիքում ընդօրինակված 1315 թ. (Մատ., ձեռ. № 2930) և Տաթեում ընդօրինակված XIII դ. վերջ և 1378 թ. (Մատ. ձեռ. № 7482) Ավետարաններում։

Առանձին նշանակություն են ստանում հիշյալ ձեռագրերի և նույն միջավայրում գտնվող նյութական մշակույթի հուշարձանների (որմնանկարչություն, քանդակագործություն և ճարտարապետական զարդարեկորատիվ տարրեր) միջև ի հայտ եկող ընդհանրությունները։ Այսպես, Դադի կամ Խութա վանքից փրկված մեկ-երկու որմնանկարներում կրկին տեսնում ենք տղամարդու (Հիսուսի պատկերը) գլխի փոքր-ինչ ետ ձգված գանգամասն ու սուրուլիկ դեմքը, որը հիշեցնում է նշված ձեռագրերի մեզ արդեն ծանոթ տիպերը։

Չափազանց հետաքրքրական են Սյրիկանքի ս. Աստվածածնի մատուքարայրի որմնանկարները (1257 թ.): Բացարձակ անուշադրության հետևանքով այդ հուշարձանը այսօր գրեթե լրիվ ավերված վիճակում է։ Ծնորհիվ Գարեգին Հովսեփյանի մոտ պահպանված մեկ հատիկ լուսանկարի<sup>27</sup> և քարայրի գունագրունտի որոշ բեկորների, հնարավոր է դառնում գաղափար կազմել այդ որմնանկարի գունածային առանձնահատկությունների մասին։ ավելին, այդպես նկատելի է հատկապես Մատենադարանի № 378 ձեռագրի մանրանկարների հետ ունեցած ընդհանրությունը։

Վերեւում, «Մեղսագործության» ասիթով խոսք եղավ Գանձասարի վանքի Աղամի ու Եվայի պատկերի մասին։ Նույն եկեղեցուց կարող ենք հիշատակել նաև «Աստվածամայրը մանկան հետ» և «Խաչելության» որմնաքանդակները։ Ուշագրավ է նաև նոր Վարագա ս. Նշան եկեղեցու (Կառուցված 1231 թ., Շամշադինի շրջան) կենտրոնական մուտքի բարավորի «Խաչելությունը», որն իր այսպես ասած «կամերային» մեկնարանությամբ մոտենում է մեր ձեռագրերի (№ 316 և 4820), պատկերներին։

Ի տարբերություն հայկական մանրանկարչության մյուս կենտրոնների<sup>28</sup>, հիշյալ խմբի ձեռագրերում ամուր կապ է նկատվում նույն միջավայրի ճարտարապետական կառույցների զարդարեկորատիվ հարդարանքի հետ։ Դրա լավագույն վկայությունը Վարագա ս. Նշան եկեղեցու զարդային մեկ-երկու դեմքույն պատկերները։

26 Տե՛ս Գ. Հովսեփյան, Մի ձեռագիր Ավետարան, «Նիւթեր և ուսումնասիրութիւններ Հայարուեստի և մշակոյթի պատմութեան», Բ, Նիւթեր, 1943, էջ 47—48։

27 Տե՛ս Գ. Հովսեփյան, Խաղբակեանք կամ Պոռշեանք Հայոց պատմութեան մեջ, Ա, Վաղպատ, 1928, էջ 99—100, նկ. 31։

28 Կարելի է նույնիսկ վկայակոչել ամբողջական դարբացներ՝ Արքիկիա, Բարձր Հայք, Վասպուրական...։

կորների համեմատությունն է. Մատ. № 4820 (ի դեպ, նույն եկեղեցուց բերված) ձեռագրի հետ: Այսպիս, եկեղեցու հարավային պատուհանի ուղղահայաց շրջանակների երկույուս ոճավորված տեղադադարդերը, որոնց ներսում լուսոսի ծաղիկը հիշեցնող փոքրիկ մոտիվներն են տեղադրված, գրեթե կրկնվում են նշված ձեռագրի «Խմասուն և Հիմար կույսեր» և մի քանի այլ պատկերների շրջանակներում: «Մկրտություն» շրջանակի կիսատերեների հյուսվածքամո-



նկ. 5

տիվները նույնությամբ հանդիպում են եկեղեցու արտաքին խորաններից մեկի ելքալին քանդակազարդերում: Էռառոսի ծաղիկը հիշեցնող զարդամոտիվները հանդիպում են ինչպես եկեղեցու պատուհանի հորիզոնական շրջանակներում,

այնպես էլ ձեռագրերի «Կոտորումն մանկանց» ու «Տյառնընդառաջ» նկարներում:

Լայն, զարդարուն շրջանակների պատկերման սովորութը և ընդհանրապես զարդարին հակումը ավելի հատկանշական է. Սյունիքի և Արցախի նկարազարդ ձեռագրերին ու ճարտարապետական հուշարձաններն Ալդ վայրերից մեղ հասած մի քանի ձեռագրեր ուղղակի զարդերի հավաքածու են ներկայացնում: Ահա Մատ. № 7482 Ավետարանը (Տաթե): Այդուղ նույնիսկ նկարների խորքը ծածկված է տարբեղ ձևերի զարդամոտիվներով: Եվ ինչն է հետաքրքրականը. այս գեղքում էլ Մատ. № 6303, 4820 և 316 ձեռագրերում հանդիպող քառանկյան շրջանակների մեջ խաչաձևկող հյուսվածքները, ոռմբաձև եռանկյունազարդերը և ոճավորված լայն տերևամոտիվները մասնակի ձևափոխումներով կամ նույնությամբ տեղ են գտնում Տաթեի վերոհիշյալ ձեռագրում:



Նման օրինակներ կարելի է ըերել Գաղի վանքի, Խորանաշատի, Գանձասարի և Գոշավանքի թմբուկների կամարածու զարդաշյուսվածքներից, ճակատամասներից, բարավորների, պատուհանների կտմարների ու խոյակների շասեղնագործ քանդակագաղարդերից, որոնց անմիջական գուգորդությունները (Հայկական խաչքարերի հետ մեկտեղ) գտնում ենք հիշյալ վայրերում ընդօրինակված ձեռագրերի մեջ<sup>29</sup>: Ի դեպ, նկատենք, որ Վասպուրականի ճարտարապետական հուշարձանները, և առաջին հերթին Աղթամարի հոշակավոր տաճարը, իրենց զարդադեկորատիվ հարդարանքով սկզբունքորեն տարբերվում են Սյունիք-Արցախի շրջաններում ընդունված ձևերից: Վասպուրականում տիրապետազը կերպարային ու իմաստասիմվոլիկ տարրերն են, Սյունիք-Արցախում՝ հարուստ ու նուրբ զարդաշյուսվածքները:

Հիշատակության արժանի են այդ վայրերում կանգնեցված փոքր ծավալի կոթողները ևս, օրինակ, Գյոմյուրում Մխիթարի և Արքիկի կողմից 1263 թ. կառուցված եռանկյունածածկ քանդակագարդ մատուռը ընդհանուր տեսքով<sup>30</sup>: Հիշեցնում է № 316, 4820 և 6303 ձեռագրերի «Տյառնընդառաջի» տաճարներն:

Համեմատությունների հարուստ նյութ են տախի Խաչենի XII—XIII դդ. գերեզմանաքարերի պատկերները<sup>31</sup>, Արցախի և Սյունիքի շրջանների խաչքարերը, ինչպես նաև զեկորատիվ-կիրառական արվեստի պահպանված դանակն այլ նմուշները<sup>32</sup>:

Այսպիսով, Մատենադարանի վերոհիշյալ ձեռագրերի մանրանկարչության ոճապատկերագրական սույն համառոտ քննությունն ու կատարված համեմատությունները մեղ նախապես կողմնորոշում են Հայաստանի հյուսիսային շրջանները՝ պատմական Արցախ, Ռատիք, Սյունիք, Գեղարքունիք:

Այժմ հետևենք, թե ինչ են հազորդում այդ ձեռագրերում պահպանված հետագա հիշատակադրությունները, որքանով են դրանք հավաստում ու վավերացնում մեր ենթադրությունը:

Եշված հինգ ձեռագրերից հիշատակադրական վիաստերով ամենից աղքատիկը № 316 Ավետարանն է<sup>33</sup>: Նրա 128ր թերթում կա զրչի կցկոտուր երկտողը. «Եւ զիս դատառապեալ ոգի գծողս և զծնողս իմ լիշեցէք առ Քրիստոս, և լիշողդ լիշեալ լիշիք ի Քրիստոսէ Աստուծոյ ամէն»:

Որոշակի րան չի ասում նաև հաջորդ հիշատակադրությունը, որը XVI դարից է. «Յիշեցէք տէր Թումէն, որ ետ իւր հալալ ընլիցն և արդար վաստակոցն,

29 Այդ տեսակներից շափականց ուշագրավ է 1315 թ. եղեգիսում նկարագրված Ավետարանը (Մատ. № 9721, նկարիչ Բարդուղ): Դա ուղղակի զարդամատիվներ պարունակող հարուստ մի շահմարան է, որը գալիս է խաչքարերի արվեստի ու ճարտարապետական զեկորների ձևերից:

30 ՏԵ՛Ս Գ. Հավանական, Խազակյանը և Պառշյանը... Ա., էջ 45: Ի դեպ, միջնադարյան Եվրոպայում ճարտարապետական նման քանդակագարդ կամար-շրջանակների ներսում տեղադրվել են պատկերներ (Andre Grabar. Sculptures Byzantines du Moyen Age. XIe - XIVe siècle. Paris 1976), ինչպես մեր ձեռագրերում է:

31 ՏԵ՛Ս Ի. Ա. Օրբելի. Բնույթական հարաբերությունների առաջնային գործությունները. Երևան, 1963, էջ 196—204.

32 Այդ տարածքի հուշարձաններին բնորոշ են հատկապես նուրբ հյուսվածքագարդերի օգտագործումը, քանդակագարդ կամար շրջանակների ձևը, ընդհանրապես զարդը, օրնամենտը, միքան, որ դժվար է ասել նույնիսկ Աղթամարի համար:

33 Մեջ չեն բերվի այն հիշատակադրությունները, ուր բացակայում է որևէ անդեկություն վայրի, ժամանակի կամ անձնավորությունների մասին:

և ետ նորոգել և կազմել անշինջ յիշատակ իւր հոգուին, և իւր ծնաւղաց հոգւոյն՝ հաւըն իսուսապաշխին, մարդն Շահրիստանին...» (261ա): Այսուհետեւ «Զեաշատուր կազմողս յիշեցէք և դիմ ծնաւղս ամեն...» (261բ):

Խաշատուր անոնով մի կազմող մեզ հայտնի է Գողթան գավառի Բուստի անուսդատից: 1489 թ. կտորած նոս մեկ աշխատանքը գտնվում է Մատենադարանում (ձեռ. Ն 6531): Այդ կազմերի համեմատությունները սակայն քիչ ժան են տառմ, մանավանդ որ դրանք հետագայում կրկին վերանորոգվել են:



№ 316 ձեռագիրը վաղուց ի վեր գտնվել է էջմիածնի մատենադարանում և կրել Կարինյան ցուցակի 300 համարը:

Երկրորդը՝ Մատենադարանի № 6303 Ավետարանն է: Գրիշը միայն մեկ տող է թողել. «Քրիստոս Աստուած աւզն հասանի Դրիգորիսի, որ կոկեաց զքարտէզս» (թ. 268թ): Սույն ձեռագրում, սակայն, պահպանված են որոշ հնթաղությունների առիթ տվող հետագա մի քանի հիշատակագրություններ: Դրանցից ամենավաղը 1356 թվականից է և, ամենայն հավանականությամբ, պատկանում է ձեռագրի առաջին տնօրինին (պատվիրատու) կամ նրա մերձակորհարադատներին. «Յանուն Աստուծոյ էս (ՏԻԸ!) Յովաննես երեց Պետանց արեդայս ու Բրտանց Սարգիս մեր սրտի տժարութեամբ սուրբ ավետարանս ծախե-



ցաք Վարդանայ ու առաք ի նրանէ. Ա. կով. Բ կտակին հաց ... վկայութեամբ ի մարդկան Բուղին, վկայութեամբ ծարեցի Չորմանին որդին Խատապատայ, վկայութեամբ Նամպատին որդին Վահրամայ, վկայութեամբ իմ Յուլիսիկ իրեցոյ վկայութեամբ, որ զգիրս գրեցի: Թվ. Պե բաղաց Գ գրեցաւ» (թ. 107թ):

Այսուհետեւ նույն ձեռագրով ամելացված է. «Ղաւետարանս թագվորայրեր (իմա երեր-Հ.Հ.), ու զգինն առ ու տարաւ»:

Այդ գործարքը փաստորեն կատարվել է ձեռագրի ընդօրինակությունից շուրջ 30—40 տարի անց Հայաստանի Հյուսիսային շրջաններում: Ուշագրավ է Արցախի Սար դավառի (ծարեցի Չորման) և Գեղարքունիքի Բրտենիք գյուղի հոլովումը:

Այդ դեսպանից տասնուինց տարի անց (1372 թ.) ձեռագիրը հանձնվում է կաղմելու. «...Ես Կարապետ արեղա տուաջնորդ եղի սուրբ և կենսարեր աւետարանիս կազմելու, Հրամանաւ տէր Գրիգոր և իշխանութեամբ... վասն յիշատակի Ղազար քահանայ և Շահրիալամ տիրին...

...Ես զաւացելայ և ի պտղո հատելայ Մելքիսեդեկի սուտանուն քահանա կազմեցի սոցա հրամանաւ զետին կաղմա...

...զկազմող Մելքիսեդեկ և զվարդապետն իմ յիշեցէք ի Քրիստոս և Աստուած զձեղ յիշէ ամեն: ...կազմեցավ Պելլ Ռուիս...» (թ. 108ա):

«Հրամանաւ տէր Գրիգոր և իշխանութեամբ» բառերը այդ ժամանակամիջոցում կարելի է վերագրել թերեւ միայն Գրիգոր Գեռարդուցուն, ծարա իշխանության Հոգեոս կենտրոնի առաջնորդին, որի նստավայրը Խաթրա վանքըն էր<sup>34</sup>:

Ինչ վերաբերում է կազմող Մելքիսեդեկին, ապա XIV դ. մեղ Հայոնի են Երկու նույնանուն կազմող, առաջինը դործել է զարի 30-ական թվականներին (այսուղ ժամանակի տարածությունը փոքր ինչ մեծ է), իսկ երկրորդ Մելքիսեդեկը ասլրել է Կաֆայում (Ղրիմ) 1357 թ.: Պարզ է, որ այս Մելքիսեդեկը համանուն մի այլ անձնավորություն է:

Հաջորդ հիշատակագրությունը 1672 թվականից է: Այսուղ ակնարկվում են բարեմիտ և տստվածասեր Սարգիսը, նրա կին Հոռոմսիմը՝ դուստրը Եղիսարեթը, որոնք Ամետարանը տվել են վերանորուզման: Հիշատակագրությունը ավարտվում է Հետելա տողերով. «...Պարձեալ կազմեցաւ թվին հայոց ՌՃիմ ամին. ձեռամբ Ղափանցի Բումային և իմ ողդի Սողոմոնին... յիշեցէք տէր ամին. ձեռամբ Ղափանցի Բումային և իմ ողդի Սողոմոնին... յիշեցէք տէր ամին. որ եղեւ պատճառ կազմելոցն» (թ. 269ա): Այսպիս ուրեմն, Սարա և Յուսուսիք տեղանուններից հետո այժմ ակնարկվում է Ղափանը<sup>35</sup>:

Ինչ վերաբերում է վերջին ստացողներ Սարգսին, նրա կին Հոռոմսիմին՝ Եղիսարեթի դստերը, ապա այդ անձնավորությունները մեղ Հայոնի են զառնում Քաշթաղաց գավառում (Գորիս)<sup>36</sup>, 1488 թ. ընդօրինակված մի այլ ձեռադրից: Այդ ձեռագրի<sup>37</sup> հետագա հիշատակագրության (1631 թ.) մեջ հանդիպում ենք դեռևս Երիտասարդ Եղիսարեթին, նրա ամուսին Հովհաննեսին և սրանց փոքրիկ դստեր Հոռոմսիմին, որը հետագայում պետք է ամուսնանար «բարե-

34 Թ. Ա. Ռեզարյան, Խաչենի իշխանություն X—XVI դարերում, էջ 393:

35 Զեռագրի 326թ թերթում կա նույն մեկ այլ կազմողի՝ Ռական Երեցի Զողած տողերը, որոնք նրա մասին տեղեկություն չեն պարունակում:

36 Քաշթաղաց ... զիստուր տեղի գաւառից է առան Գորէս» (Դ. Ալիշան, Տեղագիր Հայոց մեծաց, էջ 86 (170)):

37 Մատենագարան, ձեռ. № 6358:

միտու աստվածասեր» Սարգսի հետ<sup>38</sup>: Այդ տեղեկությունից պարզվում է, որ Սատ. № 6303 ձեռագիրը XVII դ. հանդիսացել է Գորիսարնակներ Հոռոմսիմի և Սարգսի սեփականությունը, որոնք այն հանձնել են ղափանցի Թումային կադմելու:

Ձեռագրի մասին վերջին տեղեկությունը հաղորդում է Մ. Եպ. Բարխուդարյանը: 1895 թ. նա այդ ձեռագիրը տեսել է Արցախի Գետաշեն գյուղի եկեղեցում և նկարագրել այն<sup>39</sup>: Ձեռագիրը Մատենադարան է մուծվել Գարեգին Հովսեփյանի հավաքածուից, որը, ինչպես հայտնի է, կազմված է եղել Զանգեզուրից և Ղարաբաղից բերված նյութերից: Այսպես, ուրեմն, հիշյալ ձեռագրի մեջ հայտնի բոլոր դեգերումները կատարվել են Սյունիքի և Արցախի սահմաններում:

Երրորդ ձեռագիր—Ավետարանը կրում է Մատենադարանի 4820 համարը՝ 252ա թերթի վրա կազմողի և ծաղկողի հիշատակարանն է. «Զկազմող և ծաղկող սուրբ և լուսատու աւետարանիս զմիւմաննէս, և զծնողսն իմ և ղամենիսնան, որք աշխատել են ի սմա: Ով Աստուածաէր ընթերծողը որք հանդիպիք այսմ լուսաւորշիս լիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեզ և դուք լիշեալ լիշիք լիշիք ի Քրիստոս Յիսուս...»: Տեղի որոշման առումով ոչինչ լասող «Հեղինակային» այս հիշատակարանից հետո ուշագրավ են 1511 և 1537 թթ. ումն Արիստակէս քահանայի թողած տեղեկությունները. «Ի թվին հայոց Զե և Առիստակէսս զնեցի զաւետարանս ի հալալ ընչից իմոց լիշատակ ինձ և ծնողաց իմոց՝ հաւըն իմոյ էտգարին, մայրն իմոյ Շհանքախտին...» (թ. 6թ.):

«...ի հրամանաւ տէր Առիստակէս քահանային և եղբարցն Տէրունին, ի ժամանակս տաճկաց թագաւորին Շահ-Թահմասի որդոյ Շահ-Խսմայելին, որ և յայսմ ժամանակի եղէ մահտարայժամ առ ամենայն աշխարհիս Հայոց և առաւել երկիրս Գերաբրունոյ ոչ շատոց դուռն փակեցաւ որ ոչ մնաց լիշատակ» (նկ. 13ա):

Խոսքն այստեղ վերաբերում է Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Իրանի միջև ծավալված պատերազմական գործողությունների ժամանակամիջոցին<sup>40</sup>, երբ անընդհատ կրկնվող այդ ասպատակությունների ու ավերածությունների թատերաբնմ դարձավ նաև Գեղարքունիքը (հավանաբար այստեղ էր բնակվում Արիստակէս քահանան): Ընդ որում, ժողովուրդը տուժում էր ոչ միայն այդ ասպատակություններից, այլև երբեմն մոլեկող մահտարաժամներից:

Հիսուն տարի անց՝ 1586 թ., որպէս ձեռագրի սեփականատեր, հանդիս է զայիս մի այլ անձնավորություն՝ խոչա Պարեքը. «...զվերջին ստացող սուրբ աւետարանիս զիսաւզա Պարեաք ...լիշատակ ինձ և ծնուղաց իմոց՝ հաւըն իմոյ Մասեհի և մաւրն էվդային:


... Դարձեալ լիշեցէք զիսաւզուր քահանայն, որ կամակից եղաւ ի սուրբ աւետարանիս զնելու... և ես խօչա Պարեաքս իմ սրտի օժարութեամբս առի սուրբ աւետարանս, տվի ի զուռն Սուրբ Աստուածածնի և սուրբ Ովաննես Մկրտչին, ... ի թագաւորութեան Շահ Խուտարանդային, ի հայրապետութեան էջմիածնոյ տէր Առաքել կաթողիկոսին...

Լիշեցէք ... և զիս Ոհանէս սուտանուն, որ սակաւ լիշատակս գրեցի թվ-


<sup>38</sup> Տե՛ս «ԺԷ» դարի հայերն ձեռագրերի հիշատակարաններ» (1621—1640 թթ.) թ, կազմեցին Վ. Հակոբյան և Ա. Հովհաննիսյան, Երևան, 1978, էջ 440—441:

<sup>39</sup> Մ. Եպ. Բարխուդարյան, Արցախ, Բագու, 1895, էջ 261—262:

<sup>40</sup> Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. IV, Երևան, 1972, էջ 83—88:



Եղ. 9



նկ. 10

նլի (1586) (թ. 5տ): Այդ հիշատակադրությունը ևս գրվել է Հայաստանի հյուսիսային շրջաններում՝ համանարար կրկին Գեղարքունիքի կողմերում<sup>41</sup>:

Դրա վկայությունն է նաև էջմիածնի Առաքել կաթողիկոսի հայրապետության ակնարկումը (նա կաթողիկոս է եղել 1577—1586 թթ.): Մինչդեռ հայտնի է, որ Վասպուրականի կողմերում բնդօրինակված ձեռագրերի մեջ որպես կա-

41 XVI դ. վերջի և XVII դ. սկզբներին Գեղամա երկրում (Գեղարքունիք) ընդօրինակված ձեռագրերի հիշատակարաններում հաճախ են հոլովվում պարսիկ շահերի անունները. Երկիրը մասամբ գտնվելիս է եղել շահ Խուտարանդայի իշխանության տակ (ԺՀ դարի «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» (1601—1620), Ա. կտղմեցին ու. Հակոբյան և Ա. Հովհաննիսյան, Երևան, 1974, էջ 217): Խուտարանդայի մասին տե՛ս էջ 259, 331, 360 և այլն:

նոն հիշատակվում է Աղթամարի հոգևոր առաջնորդությունն ու կաթողիկոսությունը<sup>42</sup>: Ի դեպ, հոգա Պարեքի անունը ակնարկվում է Գեղաքումիքում գտնվող XVI դ. վերջի մի արձանագրության մեջ. «Ես... պարեք շինել տվի խաչս որդոյ իմ Մելքոնին. Ուսէպ կազմող. ես շեմ արժան»<sup>43</sup>: Ս. Բարխուդարյանը այդ Պարեքի տոհմի պատմությունը կապում է Գանձակի հետ: Նրանք հետագայում տեղափոխվել են Նորադուզ գյուղ:

Զեռագրում հանդիպող վերջին հիշատակագրությունը պատկանում է Սարգիս քահանային. «Ես՝ Սարգիս քահանա ծառա Աստուծոյ ստացա զսուրք Աւետարանս ի հալալ արդեանցն իմոց. յիշատակ ինձ եւ ամուսնոյն իմո թամարի և Բ. որդեկացն իմոց Ստեփաննոս քահանայի եւ Յովաննիսի» (թ. 159թ):

Նման բնույթի հիշատակագրություններ Սարգիս քահանան և իր կինը թողել են նաև 103թ, 253թ, 158թ և մի քանի այլ թերթերում: Այս Սարգսի և նրա կին թամարի պատվերով են լրացվել ձեռագրի ավետարանիշների դիմանկարները, որոնք ե՛ ոճով և՛ տիպա-պատկերագրական գծերով ոչ մի կապ չունեն սկզբնական նկարագարդումների հետ: Սարգսի և թամարի թողած հիշատակագրությունները ավետարանիշների դիմանկարների ցածի մասում են և բացարձակապես նույն ներկերով կատարված: Ահա այն հանդամանքը (ոչ պակաս կարենոր), որ Սարգսի և թամարի ժամանակ կատարված հետագա այդ մանրանկարներն իրենց ոճով ու պատկերագրությամբ բոլորովին շեն առնչվում վասպուրականի հետ (դրանք բնորշ են Արցախի և Սյունիքի XV—XVI դդ. արվեստին), ինքնին վկայում են և հուշում վերոհիշյալ անձնավորությունների (նաև ձեռագրի) այդ ժամանակներում վասպուրականից դուրս գտնվելու մասին:

Ուշադրություն են գրավում նաև հիշյալ ավետարանի խորաններից մեկի մոտ թորոս քահանայի թողած տողերը. «Զանարժան թորոս յիշեա ի տէր Յիսուս...»: Կարծում ենք դա շատ վարժ գրիլ և նկարիլ է եղել<sup>44</sup>: № 4820 ձեռագիրը Մատենադարան է բերվել Արցախի Վարագա սուրբ Նշան եկեղեցուց<sup>45</sup>:

Չորրորդ ձեռագիրը Մատ. № 6319 ավետարանն է: Այն ընդօրինակվել է 1477 թ. Բասենի շրջանի էգեպատ գյուղում<sup>46</sup>: Այստեղ մեղ հետաքրքրողը հետագայում ձեռագրի սկզբին ամրացված հինգ թերթերն են՝ իրենց մանրանկարներով: Բնականաբար անհրաժեշտություն է առաջանում պարզել, թե որտեղ է ձեռագիրը վերանորոգման ենթարկվել որին և ավելացվել են XIII—XIV դդ. պատկանող այդ հինգ թերթերը<sup>47</sup>:

42 ...ի հայրապետութեան մերոյ կաթողիկոսութեան Աղթամարայ Տէր Գրիգորիսի...» և այլն: Ի դեպ, այդ շրջանի Վասպուրականի ձեռագրերում ամփելի շատ նշվում են Օսմանյան թուրքացի գորավարների, ինչպես նաև տեղական ամիրանների անունները (տե՛ս հ. Ն. Ակինյան, «Դաւագանագիրը կաթողիկոսաց Աղթամարայ, Վիճննա, 1920, էջ 129—130):

43 Ս. Բարխուդարյան, Գեղարքունիքի Մելքներն ու տանուտերերը ըստ Տաթեսի վանքի մի ժիաստաթղթի («Բանրեր Մատենադարանի», № 8, Երևան, 1967, էջ 191—227):

44 Ամենայն հավանականությամբ այս թորոսն է գծանկարել ավետարանի խորանները:

45 Այն գտնվում է Թուատի գավառում. կառուցվել է 1231 թ. «Ճեռամբ Յովհաննէս վարդապետի, Հրամանաւ և իշխանութեամբ իշխանաց իշխանի վառակայ...» (Մ. Եղ. Բարխուդարյան, Արցախ, էջ 336):

46 «Յամի յինն հարիւր քսան և վեցերորդի թուականութեանս հայոց (1477) գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռագր անարժան և անարժեստ գրչի Մելքիսէթ սուտանուն իրիցու... ընդ հովանեաւ սուրբ Փրկչի, ի գաւառն Բասենայ, ի գիւղս, որ կոչի է գեպատ...» (թ. 247ա):

47 Ձեռագիրը սկզբնապես թեմատիկ մանրանկարներ չեն ունեցել:



նկ. 11

Զեռազրի հետագա մի հիշատակագրություն (XVI դ.) կարծես վճռական նշանակություն է ձեռք բերում խնդրի լուսաբանման համար: «Զվերջին նորոգել տվող սուրբ աւետարանիս, Հեղ, Հանդարտ, նուն բազմաց գովելի արդունական և քաջարի Յոհան արքեպիսկոպոսն, որ է ըսպասաւոր սուրբ ուխտին հորանայշատոյ. վերըստին նորոգել ետուր սուրբ աւետարանս լիշատակ իւրն և



Նկ. 12

ճնաւղացն, Հայրն Դաւիթ քահանային, որին թրիստոսէ Հանկաւցեալ, աստուած իւրեանն արքայութիւն շնորհէ: Դարձեալ կրկին անզամ յիշել... Յոհան պարոնտէրն և պատուական եղբայրն իւր պարոնտէրն Ակորն...

Նորոգեցաւ սուրբ աւետարանս ի դադն և ի նեղ ժամնակին, ի դրան սուրբ նորակնունք Աստուածածնիս. թվիս 879 (1627), ձեռամբ սուտանուն Յոհանէս իրիցոյ Շատախնցի...» (թերթ 250ա): Պետք է նկատի ունենալ Գանձուկի մոտ գտնվող նշանավոր Շատախի Հայկական պյուղը:

Այսպես ուրեմն, ձեռագրի ընդօրինակությունից ուղիղ հարյուր հիսուն տարի հետո<sup>48</sup>, այն հասել է պատմական Արցախի սահմանները և Խորանաշատի ուստի առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոսի կողմից հանձնարարվել հիմնական վերանորոգման: Ենթադրում ենք, որ հենց այստեղ էլ այդ մատյանին միացվել են մեզ հետաքրքրող հինգ թերթերը:

Վերջին հիշատակագրությունը 1741 թվականից է. «Կազմեցաւ յաւետարանս ձեռամբ (այսպիս—Հ. Հ.) գրեցաւ յիշատակս Քարթմանկեցի Արիստակէս իրիցու որդի Վարդան քահանայի թվ. ՌՃԾ (1731) ի ձորս Ղարաղի, գեղն որ կոչի Դուռիգեղ, տանուտէրն պարոն Աթապէկն, ամեն, Հայր մեր» (թ. 250թ).

Կազմող Արիստակէս Քարթմանկեցին հայտնի դեմք է: Նա ապրել և ստեղծագործել է XVIII դ. առաջին կեսում Արցախի Գարդման գավառում (այստեղ կար նաև Քարթմանիկ գյուղ): Բացի մեզ հետաքրքրող վերոհիշյալ (№ 6319) ձեռագրից, նրա ձեռքով 1749 թ. պատրաստվել է նաև պատմական Արցախի Խաշենածոր գավառում գրիշ Սարգսի կողմից 1492 թ. ընդօրինակված ավետարանի կազմը. «Կազմեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ Քարթմանկեցի (Գարդմանցի) Արիստակէս երիցու, որդի Վարդան քահանային ՌՃԾԾ»<sup>49</sup>:

Ինչ վերաբերում է Ղարաղի ձորին կամ Ղարաղի երկրին, որտեղ վերջին անգամ կազմվել է սույն ձեռագիրը, ապա դա գտնվում է Խորանաշատից արևելք՝ Արցախի ու Ռւտիքի սահմանամիջին, Զակամի շրջանի մոտերքը<sup>50</sup>: Ինչպիս տեսնում ենք, 1627 թ. հետո էլ ընդուապ մինչև 1741 թ., ձեռագիրը դուրս չի եկել Հայաստանի հյուսիսային շրջաններից և վերջում միայն տեղափոխվել է Երևանի ու Հովհաննես եկեղեցին:

Վերջապես այս խմբի հինգերորդ ձեռագիրը կրում է Մատ. 4023 համարը: Գրչի թողած միակ տողը իր մասին չէ. «Յիշեցէք և զՎարդան կրանաւոր, յայսմ ատեն եկն առ մեղ և շնորհեաց մեզ գրչի հարթիշ» (թ. 490):

Ձեռագրի հետագա հիշատակագրություններում հոլովվում են տարբեր ժամանակներում ապրած երեք ստացողների անուններ՝ Ըսքանդար (XV դ.) Մովսես երեց (XVI դ.) և Արան մելիք (XVII—XVIII դդ.), բայց որևէ տեղավանակն ակնարկություն չկա:

«...Սուրբ աւետարանս է յիշատակ մայր լուսոյ Աստուածածնին, որ բարեխաւս է յամենայն արարածոց հաւատացելոց ի Քրիստոս, որք հաւատով խոստովանին զորդին միածնին ած արարիշ ոմի: Արդ ես Ըսքանդար, որդի խոճա Ղարիպշին զրարին մտաւ ածի և յիշեցի ... ետու կազմել զկենսունակ սուրբ աւետարանս յիշատակ ինձ և ծնողաց...» (թ. 630):

Մեզ շնաջողվեց պարզել Սրանդարի ով և որտեղացի լինելը: Նույնը պետք է անհնք նաև ձեռագրի հաջորդ ստացողի՝ Մովսես երեցի մասին». «Ես Մովսես երեցս ըստացայ սուրբ աւետարանս յիշատակ ինձ և հոգոյս փրկութիւն ... իմ

48 Ձեռագրի 248թ—249ա թերթերի անթվական հիշատակարանը վկայում է, թե ինչ ծանր դեղուամների է ենթարկվել այն մինչև Խորանաշատ հասնելը: Ձեռագրի սեփականատերը չի զոհարերել ավետարանը նույնիսկ իր տղաներին զերությունից փրկելու պայմանով. «...ես ելի պըրծայ ու տղերս կորան: Եկի մոտ ի Յովանէս էրեցն ու ասի թէ զաւետարանս տանիմ ու զիմ զերդիքն ազատիմ: Նայել ի մտք արի թե ո՞ր մարդ է ինքն զիր գլուխ կտրել, որ ես զիմ զլուխս կտրեմ ու կամ զիմ ծնողաց վարձգնու զի յիշատակն կորցեմ. ելի շկարացի խմիշ անել...»:

49 Մ. եպ. Քարխանացյան, Արցախ, Բագու, 1895, էջ 246—247.

50 Ղ. Ալիշան, Քաղաքական աշխարհագրութիւն, Վենետիկ, 1853, էջ 84 («Տեղեկագիր Հայոց մեծաց», Գանձակ-Գարդման):

կողակցին Անայ խաթունին և իւր գտերներին եւ Հոռոմսին եւ Եղիսափեթին...» (թ. 188):

Զեռագրում ամենից շատ հանդիպում ենք վերջին ստացող Արանմելիքի հիշատակագրություններին. «Յիշատակ է աւետարանս Արանմելիքին և իւր կենակցին ճոհարին ի վանքս ի մայր լուսոյ Աստուածածնին ոչ հայրապետ և ոչ արքայ և ոչ այլ սպասաւոր չունի իշխանութիւն հանել կամ ծախել...» (թ. 187ա):

Նման բարեկարգակության հիշատակագրություններ կան նաև մյուս էջերում:

Նախ նկատենք, որ ինչպես XV դարում, այնպէս էլ XVII—XVIII դդ. ձեռագրի ստացողները հիշատակում են միևնույն եկեղեցին՝ «ի վանքս մայր լուսոյ Աստուածածն»<sup>51</sup>, մի բան, որ մկանում է ձեռագրի երկար ժամանակ նույն վայրում գտնվելու մասին:

Ինչ վերաբերում է անձնանուններին, ապա առաջել ուշագրավը թերեւ Արանմելիք անվան Հոլովումն է, որի բացահայտման ուղղությամբ մեր պրապտումները, ցամաք, որնէ արդյունքի շնասցրին: Եթէ նույնիսկ Արանմելիք անունը նույնացնենք Մելիք-Արա անվան Հետ, դոցե և որոշ զուգորդությունների և նմանությունների առիթ ստեղծվի<sup>52</sup>. բայց բոլոր գեսրերում մեզ հնաւրբրող անձնավորության կոնկրետ ով լինելը շի որոշվում: Մի բան միայն կարելի է արձանագրել, որ Արանմելիք կամ Մելիք-Արա անձնանունը մեղանում ավելի հաճախ հանդիպում է Մյունիք-Արցախի շրջաններում:

Սույն ձեռագիրը Մատենագարան է, մուծվել Մեանի Հավաքածուից, որտեղ ընդգրկված էին Հայաստանի Հյուսիսային շրջաններից բերված գույքերը:

Ամփոփինք. ա) Նշված էինք ձեռագրերում ամբողջությամբ վերցրած կանոնադաշտ շուրջ քսան հիշատակագրություն: Ամենավաղը՝ 1356 թվականից է, վերջինը՝ XVIII դարից:

բ) Այդ հիշատակագրություններում ուզդակի կամ կողմնակիորեն նշված տեղանունները կապվում են միայն Հայաստանի Հյուսիսային գավառների հետ:

51 «...Այդ ևս Բարանգարս, որդի խոհան Ղարիսշին... սուրբ աւետարանս է յիշատակ մայր լուսոյ Աստուածածնին...» (թերթ 631):

«Յիշատակ է աւետարանս Արանմելիքին և իւր կենակցին նո՞ւ ։ ին (Դոհարին) ի վանքս մայր լուսոյ Աստուածածնին...» (թ. 187): Ի ուշ, «մայր լոյր Աստուածածն» վանքը հիշատակում է նաև այս նույն խմբի մեկ այլ՝ № 4820 ձեռագրում. էջ 5ա—6բ:

52 Գանձատարի վանքի Հյուսիսային պատճ արձանագրությունը «ի Թիմիք թոփս (1790) կամ առաջ Աստուածու ձեռամբ տեսան Յովհաննու կաթողիկոսին ևս Աստա (Մելիք-Արտօն) ուզրաշի որդի Մելիք Յովհաննու թափիշտ և իմ կենակից Հերիքնազ և որդի Մելիք-Պէկլար և Մելիք-Ալաւելի հալալ արդեանց շինեցար...» (Մ. Խաչ. Բարիոլյառեանց, Արցախ, Բագու, 1895, էջ 178):

Մելիք-Արտօնների մասին տե՛ս նաև Ե. Լալայան, Դանձակի զաւատ (Նյութեր ապագա ուսումնասիրության համար), «Ազգագրական հանդես», Ե, 1899, էջ 220—228, 246 և այլն:

Մ. Ամրատյանցը գրում է, որ Գեղամա երկրում իշխան տներից մեկը Արտօններին է եղել («Տեղեկադիր Գեղարքունիք ծովագարդ զաւառի», (Վաղարշապատ, 1895, էջ 571):

Մասկչայի Լաղարյանների տունում ես հանդիպում են Արա-Մելիքներ (տե՛ս Հեռուբլիկո-վաննա ակադեմիկա Պ. Կ. Կոկոնչեա և Ս. Ա. Աբամելիկ—Լազարեա, ՊԲՀ, 1978, № 1, էջ 171—175):

Մելիք-Արտօն անունը հանդիպում է նաև Փոքր Բոլես պյուղի Ակեղեցու պարսպի մոտ դրված խաչքարի վրա 1648 թվից (Ա. Զալալյանց, Ճանապարհորդութիւն ի Մեծ Հայաստան, Բ, Թիֆլիս, 1858, 84): Կա նաև Մելիք-Արտօն Արցախնեցի (Ա. Զալալյանց, Նշվ. աշխ., էջ 103):

Մելիք-Արտօններ հայտնի են նաև Քանաքեռի նշանավոր ընտանիքների մեջ. բոլոր գեսրերում, ինչպես մերեւում աստցինք, այս անունը հոլովվում է Հայաստանի Հյուսիսային շրջաններում:

Դրանք են պատմական Արցախի Շառ դավառը, Գետաշեն գլուղը, Գարդմանը, Խորանաշատը, Բրդենիքը, Ռւտիքը (Ղարաղի երկիր), Գանձասարը, Շատախ գյուղը (Գանձակի մոտ), Վարագա Սուրբ Նշան վանքը՝ Քուսափ գավառում, այնուհետև Արցախին հարեւան՝ Գեղարքունիքը, Ղափանը և այլն:

գ) Ոչ մի տեղ նույնիսկ հարեւանցի ակնարկություն չկա Վասպուրականի որևէ վայրի մասին: Բոլորովին չի հիշատակվում Աղթամարի կաթողիկոսությունը. մի քան, որ դրեթե պարտադիր է Վասպուրականում ընդօրինակված ձեռագրերի համար: Մինչդեռ այստեղ մեկ անգամ հիշվում է էջմիածնի կաթողիկոսությունը. մեկ անգամ՝ Խաթրավանքի առաջնորդությունը և մեկ անգամ էլ Խորանաշատի հոգեոր կենտրոնը: Ինչ վերաբերում է ձեռագրերում մի քանի անգամ հիշատակվող Սուրբ Աստվածածնի, Հովհաննես Մկրտչի և Գրիգոր Լուսավորչի ուխտին, ապա կարող ենք միայն ենթադրել, որ դրանք առնչվում են Արցախի Խամշի կամ Ղարամուրատի վանքին. «ի զեղս որ կոչի Պապճան, ընդ հովանեաւ Ձուխտակ եկեղեցեացս հնոյն սուրբ Աստուածածնի և նորոյս սուրբ Գրիգորի Լուսաւորչիս և սուրբ Յովանէսի և այլ սրբոցն»<sup>53</sup>:

Արցախի Հավապտեկի վանքում ևս եղել են «Սուրբ Աստուածածնի և Գրիգոր Լուսաւորչի անվամբ եկեղեցիներ»<sup>54</sup>:

Գոշավանքի եկեղեցիներից մեկը նույնպես կոչվել է Սուրբ Աստուածածնի, մյուսը՝ Գրիգոր Լուսավորչի անվամբ<sup>55</sup>: Հաղարծինում ևս այդ երկուսը կան և այլն<sup>56</sup>:

դ) Այդ ձեռագրերը Մատենադարան են մուժվել այնպիսի հավաքածուներից-Կարինյան (ձեռ. № 316), Գարեգին Հովսեփյանի (ձեռ. № 6303), Սեւանի (ձեռ. № 4024), Երևանի և Հովհաննես եկեղեցու (ձեռ. № 6319), նոր Վարագա և Նշան եկեղեցու (ձեռ. № 4820), որոնցում եղել են հիմնականում Հայուստանի հյուսիսային շրջաններից բերված գույքերը:

ե) Զկա փաստ, որ այդ ձեռագրերից որեւէ մեկը, ինչ-որ ժամանակ կամ ինչ-որ ձեռվ կապված լինի Վասպուրականի հետ (թեկուղ շատ ուշ շրջանի մեկ հատիկ հիշատակագրություն): Հասկանալիորեն այդ ձեռագրերից և ոչ մեկը չի արտացոլվել ե. Լալայանի «Հուցակ Հայերեն ձեռագրաց Վասպուրականի» հատորում (Թիֆլիս, 1915 թ.):

Արանք են գրավոր փաստերը, որից բխող հետևությունը մեկն է. այդ հինգ ձեռագրերը իրենց «կյանքի» գրեթե ողջ շրջանը (շուրջ 600 տարի) անց են կացրել Հայուստանի հյուսիսային գավառներում՝ պատմական Արցախ, Ռւտիք և Գեղարքունիք: Դա իր հերթին (և թվում է հիմնովին) հաստատում է մանրանկարների ոճածեաբանական առանձնահատկությունների՝ Արցախի և Սյունիքի արվեստի սովորույթների հետ կապված լինելու մեր տեսակետը: Փաստորեն մանրանկարների ոճապատկերագրական առանձնահատկություններն ու հետագա հիշատակագրական տվյալները համերաշխորեն լրացնում են միմյանց:

Խնդրի հնարավոր այդպիսի լուծումը, մանավանդ եթե նկատի ունենանք Արցախ-Ռւտիքից մեղ Հայտնի մանրանկարչական մի շարք առաջնակարգ

53 Հ. Համազասպ Ռուկեան, Արցախի վանքերը, Վիեննա, 1953, էջ 147:

54 Ա. Զարայան, Համբ, Բ, էջ 216—217:

55 Հ. Ռուկեան, Արցախի վանքերը, էջ 183—184:

56 Հ. Հ. Ռուկեան, Արցախի վանքերը, էջ 220—225:

ձեռագրերի առկայությունը—№ 4823 (1224 թ.), № 155 (ԺԳ դար), № 378 (ԺԳ դար, 1261 թ. առաջ), Զիկագոյի Համալսարանում գտնվող 1237 թ., 1232 թ. Գևորգ վանքում ընդօրինակված, Երուսաղեմի մատ. № 1794 (1326 թ.), Մատ. № 5669 (1279 թ.), նոր Զուղայի Ամենափրկիլ վանքի № 47 (XIII—XIV դ.), Մատ. № 379 (XII—XIII դ.) և այլն, նախադրյալներ են ստեղծում իրուելու հայկական գեղանկարչության խիստ ինքնատիպ ու պայծառ մի նոր երևոյթի՝ պատմական Արցախ-Ռտեփի մանրանկարչության դպրոցի մասին:

Г. АКОПЯН

## ГРУППА РУКОПИСЕЙ, ОТНОСЯЩИХСЯ К ШКОЛЕ МИНИАТЮРИСТОВ ИСТОРИЧЕСКОГО АРЦАХА—УТИКА

### (Резюме)

В результате изысканий, выполненных в последние годы в Матенадаране им. Маштоца, автор столкнулся с весьма интересным фактом. Группировка ряда известных и вновь обнаруженных рукописей дала возможность говорить о неизвестном до сих пор явлении в средневековой армянской живописи—школе миниатюры исторического Арцаха-Утика.

В основном рукописи этой школы были разделены на 2 группы. Предметом исследования являются рукописи II группы. Эти рукописи удостоились внимания специалистов в 1960-ых гг.; прежде высказывалось мнение (поскольку в них отсутствовали памятные записи, сделанные во время копирования), что эти манускрипты относятся к васпураканской школе миниатюры.

На основании стилистико-изобразительных материалов миниатюр, так же как на основе сохранившихся в рукописях позднейших памятных записей (древнейшая—от 1345 г.), сделана попытка посредством подробного анализа показать, что эти рукописи были переписаны и разрисованы в культурной среде исторического Арцаха-Утика.

Հ. Ի. ԽԱԿՈՊՅԱՆ

## UN GROUPE DE MANUSCRITS DE L'ECOLE DE MINIATURE DE LA REGION HISTORIQUE DE L'ARTZAKH ET DE L'OUTIK

### (Résumé)

Les recherches effectuées par l'auteur au cours des dernières années au Maténadaran Machtoz l'ont mis en présence d'un fait fort intéressant. Le groupement d'un certain nombre de manuscrits connus ou nouvellement découverts a donné la possibilité de parler d'un phénomène, inconnu jusqu'à présent, de la peinture arménienne médiévale: l'école de miniature de la région historique de l'Artzakh et de l'Outik.

D'une manière générale, les manuscrits de cette école ont été partagés en deux groupes. Ce sont les manuscrits du II<sup>e</sup> groupe qui font l'objet de cette recherche. Ces manuscrits ont attiré l'attention des spécialistes aux années 1960 et certains ont exprimé l'opinion (étant donné que les colophons des scribes y manquent) que ces manuscrits appartenaient à l'école de miniature du Vaspourakan.

Prenant à l'appui le matériel stylistique et pictural, ainsi que les colophons plus tardifs conservés dans les manuscrits (le plus ancien remonte à 1354), l'auteur s'est efforcé de montrer par une analyse détaillée que ces manuscrits avaient été écrits et enluminés dans les centres culturels de la région historique de l'Artzakh et de l'Outik.